

Կոտայքի մարզպետը ներկա է գտնվել «ՍՕՍ Մանկական Գյուղեր»-ի այլընտրանքային խնամքի ծառայությունների բացման արարողությանը

30.10.2019

Այսօր «ՍՕՍ մանկական Գյուղեր» ՀԲԸ-ի Կոտայքի մասնաճյուղում տեղի է ունեցել նոր ստեղծված, վերանորոգված այլընտրանքային խնամքի ծառայությունների բացման արարողությունը, որին ներկա է գտնվել մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը:

Բացման արարողությանը ներկա էին նաև Հայաստանի Ժամանած «ՍՕՍ մանկական Գյուղեր» միջազգային կազմակերպության, ինչպես նաև «ՍՕՍ մանկական Գյուղեր» Ֆրանսիա անդամ ընկերակցության ղեկավար անձնակազմի ներկայացուցիչները, ՀՀ նախագահի տիկին Նունե Սարգսյանը, Ֆրանսիայի դեսպանատան, ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչներ:

Ողջունելով ներկաներին՝ մարզպետը ևս մեկ անգամ վերահաստատել է իր պատրաստակամությունը իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում աջակցելու կազմակերպության առաքելությունից բխող ցանկացած ձեռնարկ: